

ԴԱՍ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՔ



Հրատարակութիւն
ԿՐԹԱԿԱՆ ԿՆԴՐ. ՄԱՐՄՆԻ

491.99-8

17-21

491.99-8

1005-1

7-21

ԴԱՍ ԵՒ ԱՃԽԱՏԱՆՔ

Ա. ՏԱՐԻ

Հետևողութեամբ

Չ. ԱՃԻՄԵԱՆԻ

Հրատարակութիւն

ԿՐԹԱԿԱՆ ԿԵԴՐ. ՄԱՐՄՆԻ

329A Columbus Ave.

Boston, Mass.

1935

ԳԻՆ 35 ՍԵՆԹ

8 MAR 2013



Դ Է Պ Ի Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Օրերն անցան հանգստի

Գործի անցնինք ընկերներ,

Որուն վաղուց ամենքս ալ

Կը սպասէինք անհամբեր:

ՀԱՐՑԱՐԱՆ.— Ո՞րոնք են հանգստի օրերը:


Ի՞նչու ժամանակ է:

Դուն ո՞րը շատ կը սիրես, հանգստի թէ աշխատանքի օրերը:

Քանի՞ բառ կա այս ոտանաւորի առաջին երկու տողերուն մէջ:



58539 - 67



ԻՆՁ ԿԸ ԽՆԴՐԷՐ ԳԻՐՔԸ

Դասատուն այսօր ըսաւ մեզ.

— Գիտէ՞ք երեխաներ, ձեր գիրքն ի՞նչ կ'ըսէր, եթէ խօսիլ կարողանար:

Ան կ'ըսէր.

— Կեղտոտ ձեռքերով ինձ չվերցնէք:

— Մէջտեղէն չծալէք, կազմս կը փճանա:

— Թերթերու անկիւնները չծալծէք:

— Ոեւէ բան չգրէք եւ չնկարէք իմ մէջ:

Դասատուն ըսածը մեզի շատ դուր եկաւ, եւ մենք որոշեցինք գրքի բոլոր խնդիրները կատարել:

ՀԱՐՑԱՐԱՆ.— Ի՞նչ կը խնդրէր տետրակը, մատիտը, գրիչը:
Ի՞նչ կը խնդրէր նստարանը, սեղանը:
Ի՞նչ կը խնդրէր դասարանը:
Քանի՞ ձայնաւոր եւ քանի՞ բաղաձայն կա գիրք բառին մէջ:

Գ Ի Ր Ք Ը

Ես կ'աշխատիմ, իմ սիրուն գիրք,
Քեզ միշտ պահել մաքուր ու նոր.
Թերթիկներդ չեմ ծալծելը,


Կեղտոտ ձեռքով քեզ չեմ վերցնելը:

Մաքուր թղթէ շապիկ կտրեմ,

Գոյն-գոյն թղթէ՛ նախշուն նշան:

Դու կը մնաս միշտ սիրուն, նոր,

Ես կը կարդամ քեզ ամեն օր:



Քառակուսի

Եռանկիւն

Շրջան

Գունաւոր թղթերէ գրքի համար այսպիսի նշան պատրաստենք:

ՀԱՐՑԱՐԱՆ.— Գիրքը ի՞նչպէս պէտք է պահել:
Ի՞նչպիսի աշակերտ մաքուր կը պահէ գիրքը:
Դուն կ'ուզե՞ս մաքուր գիրք ունենալ:
Քանի՞ բառերէ կազմած է եռանկիւն բառը:
Իսկ վեցանկիւնը:

Հ Ե Ր Թ Ա Պ Ա Հ Գ Ր Ի Շ Ա Ն

Այսօր մեր դասարանի հերթապահը Գրիշան է:
Շատ գործ ունի ընելու Գրիշան:

Գրիշան պէտք է կէս ժամ շուտ դա դպրոց, հսկէ
դասարանի եւ գրատախտակի մաքրութեան, կաւիճ
բերէ եւ ջնջանը թրջէ, կաղամարները մելան լեցնէ,
դասամիջոցներուն պատուհանները բանա, բացա-
կայողներու եւ ուշացողներու հաշւառումը կատարէ:
Շատ բան ունի ընելու Գրիշան:

ՀԱՐՅԱՐԱՆ.—Ձեր դասարանի հերթապահները իրենց պար-
տականութիւնը լրիւ կը կատարե՞ն:

Կ Ա Ր Ո Յ Ի « Ա Պ Ա Կ Ի Ն »

— Ապակի եմ գտեր, ապակի եմ գտեր, սիրուն
ապակի,— գոչելով սենեակ մտաւ փոքրիկ Կարոն,
սառոյցի կտորը ձեռքին:

— Այդ ապակի չէ, Կարո ճան,— ըսաւ մայրը:

— Հապա ի՞նչ է, մայրիկ: Վա՛յ, սառն է, դնեմ
վառարանի վրա, թող տաքնա:


Ու սառոյցի կտորը դրաւ երկաթէ վառարանին
վրա:

«Ապակին» թշտաց, փշտաց, ասղին ու անղին
փախաւ, ու... պրծաւ:

— Վա՛յ, մայրիկ, ապակիս պրծաւ, ըսաւ Կա-
րոն:

ՀԱՐՅԱՐԱՆ.— Ինչո՞ւ ապակին «պրծաւ»:

Ո՞ր բառերուն վրա հարցական կա եւ ո՞ր գրի
վրա դրած է:



Ծ Տ Ի Կ Ն Ե Ր Ո Ւ Ը Ն Տ Ա Ն Ի Ք Ը

Տեսէք ինչպէս են հաւաքւեր ծիտերը, ու կը
կտցեն հացի փշրանքները:


Բա, դուք ալ չէ՞ք ուզեր այդպիսի սեղան չինել
ծիտերու համար:

Յուրա է, խեղճերը անօթի են, կը թռչին բան
մը ճարելու:

Ամեն տեղ ձիւն ու սառոյց է:

Անոնց համար սեղան չինելը դժուար չէ, դուք ալ
փորձեցէք չինել:

ՀԱՐՅԱՐԱՆ.— Ծիտերը ի՞նչպէս կ'ապրին ձմեռը:
Ի՞նչու ծիտերը հաւաքւեր են տան շուրջ:
Դուն կ'ուզե՞ս ծիտերը կերակրել:
Ուրիշ բառով ի՞նչպէս կ'ըսեն — անօթի,
ցուրտ, հաւաքւեր:



Ծ Տ Ի Կ Ն Ե Ր Ո Ւ Ը Ն Տ Ա Ն Ի Ք Ը

Կանանչազարդ մեր բալի,
 Խոռոչին մէջ նեղ պատի
 Բուն էր դրեր մի փոքրիկ
 Ծտիկներու ընտանիք.
 Մայր Ծտիկը ամեն օր
 Որդ կը բերէր, կամ թրթուռ
 Միջատ, բզեզ, չնաճանճ.
 Չագուկներուն կերակուր.
 Մայր ծտիկը խելօք էր
 Նա իր բանը լաւ գիտէր,
 Միշտ հերթով ու հաւասար
 Չագուկներուն ճաշ կուտար:

ՀԱՐՑԱՐԱՆ.— Ծտիկներու բոյնը ո՞ր էր:
 Մայրը ի՞նչով կը կերակրէր ձագուկները:
 Ի՞նչպէս կը կերակրէր:
 Քանի՞ հնչուն կա բալի բառին մէջ:

Լ Ո Ւ Ս Ի Կ Ը

Լուսիկը դպրոցէն կը բացակայէր: Անցեալ տարի նա մեր կարգի ամենէն յառաջադէմ աշակերտներէն էր:

— Ի՞նչու Լուսիկը դպրոց չի գար, կը հարցնէ վարժուհին՝ զարմացած: Միթէ նա չուզեր հայերէն սորվիլ:

— Ո՛չ, կը պատասխանէ Տիրանը, որ Լուսիկի դրացին է: Անոր հայրը անգործ է, եւ Լուսիկը հագուստ ու կօշիկ չունի: Նա ամերիկեան դպրոց ալ չերթար:

Հայկը կ'ըսէ.— Մենք պիտի օգնենք Լուսիկին որ դպրոց գա:

ՀԱՐՑԱՐԱՆ.— Լուսիկը կը սի՞րէ հայերէն սորվիլ:
 Հապա ի՞նչու կը բացակայի դպրոցէն:
 Դու կ'ուզե՞ս օգնել քու ընկերին:
 Քանի՞ ձայնաւոր հնչուն կա տարի բառին մէջ: Քանի՞ բաղաձայն:



ՊՁՏԻԿ ԾԻՏԸ

Պզտիկ ծիտ եմ	Ծիտ անունը
Ծտի ցեղէն,	Ինձ է հասեր:
Ծտաստանի	Հիմա ալ ես,
Ծտոց գիւղէն:	Ծիտ պապիս պէս
Իմ պապերուն	Կը ծլվլամ
Ծիտ են ըսեր:	Կը թուլում:

ՀԱՐՑԱՐԱՆ.— Ծիտը ո՞ր ցեղէն է:
 Ի՞նչու իր անունը ծիտ են դրեր:
 Հիմա ի՞նչ կ'ընէ ծիտը:
 Ի՞նչ տարբերութիւն կա հնչունի եւ տառի մէջ:

Տեղեկանք — Հնչունը կ'արտասանի եւ կը լսւի, իսկ տառը կը գրւի եւ կը կարդացւի:

ԼԵՒՈՆԻԿԻՆ ԽՆՁՈՐԸ

Մայրիկը խոստացեր էր Լեւոնիկին խնձոր տալ:

Իրիկունը, երբ մայրիկը կը ֆնացնէր Լեւոնիկը, ան խնձորն ուզեց:

— Բնի՛ր, Լեւոնիկ ցան, ուշ է. խնձորներն արդէն ֆներ են: Դուն ալ ֆնիր:

— Չէ՛, մայրիկ ցան. հիմա պզտիկ խնձորները ֆներ են. մեծերը դեռ արթուն են:

ԴԱՍԸՆԿԵՐՆԵՐԸ

— Եկէ՛ք այնպէս սովորենք, այնպէս սովորենք, որ դասարանէն ոչ ոք ետ չմնա, — առաջարկեց Յուլիկը:


— Բայց ես ի՞նչ ընեմ, հիւանդացա ու հիմա ետ եմ մնացեր — խեղճ-խեղճ ըսաւ Աննիկը:

Ճիշտ է որ մեր խումբէն մի քանի հոգի ետ են մնացեր, պէտք է մտածել:

Որոշեցինք.—

Ետ մնացողներուն հերթով օգնել:

ՀԱՐՑԱՐԱՆ.— Ի՞նչ առաջարկեց Յուլիկը:
 Ո՞վքեր էին ետ մնացողները:
 Ի՞նչ որոշեցին ետ մնացողներու համար:
 Քանի՞ բառէ կազմուած է դասընկեր բառը:
 Ի՞նչ կ'ըսւի այն բառին երբ մէկէ աւելի բառերու միացմամբ կազմուած է:



Ա Ր Ջ Ը

Հայր արջը իր որջին մէջ խոր քուն է մտեր:
 Մայր արջն ալ քնացած է զոթոթներուն հետ ու-
 ըիշ որջի մը մէջ: Մուտքը ամուր փակեր է: Ձիւնն
 ալ վերէն ծածկեր է զանոնք սպիտակ վերմակով
 մինչեւ Գարնան գալը:

ՀԱՐՅԱՐԱՆ.— Արջերը ո՞ր կը պտուկին ձմեռը:
 Ի՞նչու արջերը չեն մսիր ձմեռը:
 Ե՞րբ արջը կ'արթննա:

Ո՞Վ ՈՐՈՒՆ Է ԲՌՆԵՐ

- Արջ եմ բռներ...:
- Կ'ըսէ որսորդ Վարդանը:
- Դէ բեր այստեղ
- Կը կանչէ Պետրոսը:
- Չի գար արջն, է'...
- Դէ դուն եկուր.
- Չի ձգեր է'...:

Հարցուցէ՛ք ուսուցչին թէ որո՞նք են կետադրութեան նշան-
 ները:

ՅԱՍՄԻԿ ԲԱՑԱԿԱ Է ԴՊՐՈՑԷՆ

Անցեալ տարի մեր դասարանը նոր հայերէն
 գրել կարգալ կը սորվէր:

Յասմիկը շատ յառաջադէմ էր դասարանին մէջ:

Այս տարի մենք վերստին սկսանք հայկական
 դպրոց յաճախել, բայց այս չորրորդ դասն է եւ
 Յասմիկը չկա:

— Գիտէ՞ք, ինչու Յասմիկը չի գար դպրոց,
 — հարց կուտա դասատուն:

— Յասմիկին հայրը չորս տարի է անգործ է,
 Յասմիկը գուլպա եւ կօշիկ չունի, ան ամերիկեան
 դպրոց ալ չերթար, — կը պատասխանէ Սարգիսը,
 որ Յասմիկին դրացին է:

— Ուրեմն Յասմիկը մինչեւ վերջ դպրոցէն պի-
 տի զրկւի՞ր, — կը հարցնէ Մկուչը, որ ծակած կօշիկ-
 ներ ունի եւ կօշիկի ծակերէն կ'երեւան զետնախնձո-
 ըր պէս ոտքի բլթամատերը:

— Ո՛չ, կը պատասխանէ Սարգիսը, մենք ու-
 նինք Անգործներու Թաղային Խորհուրդը: Անգործ-
 ներու Թաղային Խորհուրդը կը պահանջէ նպաստի
 գրասենեակէն եւ կ'ստիպէ, որ Յասմիկին հագուստ,
 կօշիկ եւ գուլպա տրւի եւ Յասմիկը դպրոց երթա:

ՀԱՐՅԱՐԱՆ.— Ձեր հայրը կամ մայրը կը գործէ՞:
 Դուք ալ Անգործներու Խորհուրդ ունի՞ք ձեր
 քաղին մէջ:
 Վերջակէտը ե՞րբ կը գործածւի:
 Քանի՞ վերջակէտ կա այս էջին վրա:

ԱՂԱՍԻԻ ՁԵՌՔԵՐԸ

Աղասի դասարան մտաւ եւ կապուեցամ ձեռքերը թափահարելով վազեց դէպի վառարանը: Վա՛յ մատներս, վայ մամա ջա՛ն...:


Աղասին մատները բերանը կը տանէր, ցաւէն կը կծկէր եւ ոտքերը գետինը կը զարնէր ու կուլար:

Հսկիչ Սուրէնը մօտեցաւ անոր, ետ քաշեց վառարանին քովէն ու դուրսէն բերած ձիւնով սկսաւ մատները շփել:

Աղասին հանգստացաւ:

Աչքերը սրբեց:

ՀԱՐՑԱՐԱՆ. — Ի՞նչ էր պատահեր Աղասիին:
Երբ մատները ցուրտէն սառած են ի՞նչ պիտի է ընել:
Քանի՞ ստորակէտ կա այս էջին վրա:
Ստորակէտը ե՞րբ կը գործածուի:



ՄԵՐ ՆԱՊԱՍՏԱԿԸ

— Ի՞նչ եմ բերեր, եթէ գիտնա՛ք, ի՛նչ եմ բերեր...:

Ուրախ ուրախ դասարան մտաւ Լենիկը հագուստին տակ բան մը պահած:

Բոլորս մօտեցանք, հագուստին ծայրը մէկ կողմ տարինք, տեսանք ի՛նչ... Նապաստակ մը ձիւնի նման սպիտակ, կզկզած կը դողա. ի՛նչ լաւ է, տեսնեմ, տեսնեմ...:

— Ականջները, տեսէք ի՛նչ երկար են...:

— Բա, աչքերը, կլոր, կարմիր...:



— Պեխերին, պեխերին, պոչին նայեցէք, կարճիկ պոչին...:

— Բերած եմ որ պահենք մեր «Կենդանի անկիւնը», անտառէն եմ բռնած: Հայրիկս փայտի դացած ժամանակ չէր ուզեր ինձ միասին տանիլ: Այնքան խնդրեցի, որ վերջապէս տարաւ: Լաւ է չէ՞, նապաստակը, — կ'ըսէ Լենիկը եւ հպարտ-հպարտ կը նայի մեզ:

ՀԱՐՑԱՐԱՆ. — Նապաստակները միշտ սպիտակ կ'ըլլան:

Ի՞նչ կենդանիներ կը սիրես:

Տւէ՛ք հետեւեալ բառերու հակամիջները, ուրախ, սպիտակ, լաւ, երկար, փափուկ:



ԿՈՒԱՐԱՐՆԵՐ

Տեսէք այս կուարարները. կը հաւանի՞ք անոնց:

Լաւ մը նայեցէ՛ք, որուն կը նմանին: Հասկցէ՛ք ո՞վքեր են անոնք:


ՄՐՅՈՒՄ

Մեր բոլոր խումբերը իրար հրաւիրեր են մաքրութեան մէջ մրցելու:

Օննիկը մեզ ամօթով թողուց. տետրակին մէջ երեք տեղ մեւան էր կաթեցուցեր. յետո ալ իբր թէ մաքրեր էր ռետինով եւ թուղթը ծակեր:

Ստուգողները մեզ տարւած յայտարարեցին Օննիկի պատճառով:

ՀԱՐՑԱՐԱՆ.— Ձեր դպրոցին մէջ քանի՞ խումբ կա:
Դուք ալ մաքրութեան մէջ կը մրցի՞ք իրարու հետ:
Ի՞նչու Օննիկ բառը գլխագիրով սկսած է:
Գլխագիրը ե՞րբ կը գործածւի:



ԱՇԱԿԵՐՏՆԵՐՍ

Աշակերտները նոր պայմանագիր կը գրեն: Անոնց գլխաւոր նպատակն է զօրացնել իրենց դպրոցը: Որոշած են կատարել հետեւեալ աշխատանքը.—

- 1.— Համոզել բոլոր հայ ընկերները, որ մեր դպրոցը յաճախեն:
- 2.— Օգնել տկար ընկերներուն, որ իրենց դասերը լաւ սովորին:
- 3.— Դպրոցը դարձարել եւ մաքուր պահել:
- 4.— Սիրել եւ օգնել մեր Խորհրդային Հայրենիքին:

ՀԱՐՑԱՐԱՆ.— Աշակերտները ի՞նչ կ'ընէին:
Ի՞նչ որոշեցին ընել:
Գետ, գետակ, տուն տնակ:
Նոյն ձեւով ամանցեցէ՛ք լիճ, բլուր, առու, տետր, ձոր բառերը:

79-63585



Այսօր մենք ուսուցչուհիի հետ անտառ գնացինք:

Արամը կը կրէր չափը, Կարապետը բահ մը: Մօտեցանք անտառին: Սպիտակ ձիւնի վրա զանազան հետքեր կ'երեւային:

Չիւնին մէջ խրեւրով մտանք անտառ:

— Եկէք նստինք եւ պսակներ շինենք, ըսաւ Սուրիկը:

Բոլորը ծիծաղեցան:

— Ո՞ւր են նաչխուն, դեղին ու կանանչ աչնան տերեւները:

Կարապետը բահով ձիւնը մէկ կողմ նետեց եւ տակէն հանեց քիչ մը կանանչ խոտ, մի քանի սեւցած, փտտած տերեւներ:

— Աննա, ծիտը, ան սիրուն ծիտը... կը յիշես...:

Աննա ասդին անդին կը նայի, եւ չի տեսներ գարնան սիրուն թռչունները:

Ծառերը մերկ, միայն եղեւնին կանանչ է հագած:

— Ու, ու... սկսեց Գէորգը յանկարծ, ա՛յ, գայլը կուգա, ու գայլի ոռնոց, արջի մըթմըթոց խրար խառնեցան:

— Եկէք ձիւնի խորութիւնն ալ չափենք ու տուն երթանք:

ՀԱՐՑԱՐԱՆ.— Ի՞նչ է անտառի տարբերութիւնը ձմեռուա եւ ամառուա ժամանակ:

Ինչո՞ւ ձմեռը անտառները թռչուններ չկան: Միջատները ի՞նչպէս կ'ապրին ձմեռը անտառին մէջ:

Շուն, շնիկ. նոյն ձեւով կազմեցէ՛ք ուլ, այծ. սագ, վարդ, ծառ:



Պզտիկները միասին, Սահնակները ուսերնին, Չայն կուտան ու կաղմկեն, Դէպի բլուր կը վազեն:

— Դէ, տղէք ջան, լսեցէք, Իմ ետեւէս շարեցէք, Գոչեց Վաչոն չարածճի, Նստաւ սահնակն առաջին, — Ես կ'ըլլամ ձեր առաջնորդ,



Եւ երբ կուտամ հրաման, Դուք բոլորդ ալ համարձակ կ'իջնէք մինչեւ բլրի տակ: Դէ՛հ տղերք, ջան, դէ՛հ պատրաստ,



Մէկ, երկու, երեք, չորս, Սահնակները պինդ նստէք:



ՀԱՐՑԱՐԱՆ.— Պզտիկները սահնակներով ո՞ւր կ'երթան: Ո՞վ է անոնց առաջնորդը: Դուն երբե՞ք սահնակ նստած ես:

Հորթ, հորթուկ. նոյն ձեւով կազմեցէ՛ք ձագ, տափ, պաղ, նեղ, գառ: Բաւերու վերջը դրող ալ, իկ, ուկ մասնիկներ են: Ի՞նչ ցոյց կուտան այս մասնիկները:



ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԻԱՍՆԻԿԵԱՆ

Երբ Միասնիկեանը փոքր էր անոր Սաշա կ'ըսէին: Նա շատ ընդունակ տղա էր:

Յաճախ առաւօտներ կանուխ դպրոց կ'երթար կ'օգնէր թոյլ ընկերներուն:

Ամառը իր ծնողներուն հետ նոր Նախիջեւանի մէջ կ'անցնէր: Օրւան մեծագոյն մասը ընթերցանութեան կուտար:

Մանկութենէ նա կը սիրէր աշխատաւորները եւ զը փափաքէր անոնց օգտակար ըլլալ:

Խ. Հայաստանի առաջին նախագահը եղաւ եւ օգնեց ՀՕԿ-ի հիմնադրութեան:

ՀԱՐՑԱՐԱՆ.— Ո՞վ էր Ալեքսանդր Միասնիկեան:
Նա ի՞նչու կը սիրէր աշխատաւորները:
Ա. Միասնիկեանի մասին քանի՞ բան ըսած է:
Քանի՞ միտք կա այս հատուածի մէջ: Ամեն մէկ մտքէն յետո ի՞նչ կէտ դրած է:

Զ Ի Ի Ն Ը

Մաքուր ու ճերմակ,
Լայն ու ահագին,
Փափուկ մի վերմակ
Փուած է գետին:
Քներ են ձեան տակ
Ծիլեր անհամար,
պայծառ զարունին
Ծաղկելու համար:

Բիւր փաթիլներով
Սիրուն ու նաչխուն
Կը մաղւի ձիւնը
Անծայր դաշտերուն:
Թեթեւ թեւերով
Կ'ուզեն միշտ պարել
Թիթեռներու պէս,
Անձայն թափառել:

Զեր բառերով պատմեցէք:

ԱՍՏԴԻԿԸ ԿԱՐԴԱԼ ԳԻՏԷ


Աստղիկը սեղանի առաջ նստած գիրք կը կարդար: Վարդանը կը մօտենա եւ կը հարցնէ.—

— Կարդալ գիտե՞ս:

— Գիտեմ կը պատասխանէ Աստղիկը,— լա՛ւ կը կարդամ, բայց՝ աւելի լաւ կը կարդայի, եթէ կէտերը չըլլային: Կէտերը կը խանգարեն:

ՀԱՐՑԱՐԱՆ.— Կարդացած ատեն ձեզ ալ կէտերը կը խանգարե՞ն:
Ի՞նչ մասնիկ ունին — Սիրուն, Աստղիկ, Վարդան:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ԽՍՅՄ-Ի ՊԱՇՏՊԱՆՆ Է



Կարմիր նաւատորմիդը կը պաշտպանէ Խորհրդային Միութիւնը ծովի վրա:



Կարմիր հեծելազօրը՝ ցամաքի վրա:



Օդային նաւատորմիդը կը պաշտպանէ օդին մէջ:

Նաւատորմիդ բառը ի՞նչ բառերէ կազմուած է:

Պ Ա Տ Ր Ա Ս Ս

Ուրիշի հողը մենք չենք պահանջեր,
Բայց եւ մեր հողէն մէկ թիղ չենք զիջեր:
Ու ատոր համար երբ նշան տուի,
Կարմիր բանակը պատրաստ է կռի:

Մենք կարմիր մարտիկներս կռիլ չենք ուզեր,
բայց երբ թշնամին յարձակելու փորձ ընէ — մենք
միշտ պատրաստ ենք:



Թոյլ չեմ տար թշնամուն սահմանէն նայելու:



Թոյլ չեմ տար թշնամուն ծովէն դուրս դալու:

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Ոչ պատրոյգ կա, ոչ ալ նաւթ,
Մէկ ապակի է անզարդ,
Վիզը բարակ, փորն ուռած
Բարակ թելէ մը կախած:
Երբ իրիկուն է խաւար,
Եւ արեւը մայր մտած,
Զրըբիկ...
Նա լոյս կուտա մեզ պայծառ:
Ըսէ տեսնեմ. ի՞նչ է այդ:

Ընդգծեցէ՛ք այս ոտանաւորի ձայնաւոր տառերը:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՕՐԸ

Կարմիր Բանակի տօնին համար կը պատրաստու-
ւինք:

Պիտի երթանք զօրանոց:

— Եկէք նւերներ պատրաստենք, — առաջարկեց
Արփիկը:

— Ի՞նչ տանինք, ի՞նչ նւիրենք...:

Մտածեցինք, մտածեցինք, վերջը գտանք, որ
ամենէն լաւն է՝ կարմիր բանակայիններու համար
թաշկինակներ կարենք ու տանինք:

Կտորը գնեցինք, թաշկինակներ կարեցինք:
Մեծ-մեծ տառերով նշանաբաններ գրեցինք:

Մեր ուսուցչուհին շատ բաներ պատմեց Կար-
միր Բանակի եւ ուրիշ երկիրներու մասին:

Վաղը մենք ալ ամբողջ խմբով դուրս կուգանք
տօնին մասնակցելու:

ՀԱՐՑԱՐԱՆ.— Երեխաները ի՞նչու Կարմիր Բանակը կը սի-
րեն:

Երեխաները ի՞նչպէս ցոյց կուտան իրենց
սէրը:

Ի՞նչ բառերէ կազմած է այս հատուածի վեր-
նագիրը:

Ի՞նչ ցոյց կուտա կարմիր բառը, բանակը,
օրը:

Տեղեկանք - Բանի մը անունը գոյական է: Օ-
րինակ - բանակ, օր, զօրանոց, ուսուցչուհի,
Արփիկ:

ՍՈՆԱՆ ԿԸ ՏԱՔՆԱ

Մենք այսօր խումբով գնացինք հաւաքական
տնտեսութեան գոմը նայելու՝ արդեօք մաքուր է,
տա՞ք է:

Սուրիկն ալ մեզի հետ էր:

— Ի՞նչ լաւ է այստեղ, լոյս, տաք:

Մեր գոմը մութ է, խոնաւ, ցուրտ:
Խեղճ Սոնան հիմա կը մտի, — կը մտածէր Սուրիկը
եւ կը խղճար իրենց կովի վրա:

— Կիմ, այ Կիմ, ի՞նչ կ'ըլլա մեր Սոնին ալ հոս
բերենք որ քիչ մը տաքնա, մայրիկը տունը չէ:

Գնացինք Սոնայի եղջիւրներէն կապ մը կապե-
ցինք ու բերինք հաւաքական տնտեսութեան գոմը:

Քեռի Կարոն կովերը կերակրելու եկաւ, տեսաւ
Սոնան ու ծիծաղելով ըսաւ.

— Այս ի՞նչ բան է. կովերն իրենք իրե՞նց կո-
մունա կուգան:

— Այդ մեր կովն է, քեռի Կարո, — ըսաւ
Սուրիկը. — բերեր եմ որ քիչ մը տաքնա:

Մայրիկիս կը համոզեմ, որ հոս թողու: Մենք
ալ հաւաքական տնտեսութեան կը միանանք:

ՀԱՐՑԱՐԱՆ.— Ի՞նչ է հաւաքական տնտեսութիւնը:
Ի՞նչու Սոնան տարին հաւաքական տնտեսու-
թեան գոմը:

Ստորագծեցէք այս հատուածի մէջ գտնուած բոլոր գոյա-
կանները:

Լենինականի մանածի գործարանը մեծ է: Գործարանին մէջ շատ բանւորներ կ'աշխատին: Հոս մանած կը պատրաստեն, հոն կտաւ կը գործեն: Մեքենաներու աղմուկը կը լեցնէ գործարանը:

Գործէն վերջ բանւորները տուն կ'երթան, կը ճաշեն, կը հանգստանան: Իրիկունները կ'երթան աշուրճակոյցներ լսելու, գիրք ու լրագիր կարդալու, կամ շարժանկար տեսնելու:

ՀԱՐՑԱՐԱՆ.— Ո՞ր է Լենինականը:
Ի՞նչ գործարան կա Լենինականի մէջ:
Խ. Հայաստանի մէջ բանւորները ի՞նչ կ'ընեն գործէն վերջ:
Կրնա՞ս ցոյց տալ Լենինականը քարտէսին վրա:
Մեծ գործարան. ո՞րն է գոյականը այս երկու բառերէն:
Իսկ ի՞նչ ցոյց կուտա մեծը:

Տեղեկանք - Այն բառը որ գոյականի մը բով կը գրւի անոր ինչպէս, ինչքան եւ որո՞ւ ըլլալը ցոյց կուտա կը կոչուի ածական:



Դաշնակներու ժամանակ Հայաստանը գէշ օրեր կ'ապրէր:

Ալան թալանը, սովը քայքայեր էին երկիրը: Խուլ անկիւններէն անկարելի էր անցնիլ: Ամեն տեղ վտանգ կ'սպառնար:

Դա հին Հայաստանն էր, դաշնակներու Հայաստանը:

Բանւորներն ու զիւղացիները ապստամբեցան: Կարմիր բանակը Հայաստանը մաքրեց խմբապետներէն եւ ձրիակերներէն:

Հայաստանը Խորհրդային դարձաւ եւ սկսաւ սոցիալիստական շինարարութիւնը: Նոր կեանք ստեղծուեցաւ աշխատւորութեան համար:

Դա նոր Հայաստանն է, Խորհրդային Հայաստանը, եղբայրացած միւս հանրապետութիւններու հետ:

Հայաստանի Խորհրդայնացումը եղաւ 1920 թիւ Նոյեմբեր 29-ին:

ՀԱՐՑԱՐԱՆ.— Ի՞նչ օրեր կ'ապրէր Հայաստանը Դաշնակներու օրով:
Ո՞վքեր ազատագրեցին Հայաստանը:
Ի՞նչ է տարբերութիւնը հին եւ նոր Հայաստանի միջեւ:
Ի՞նչ գիտես Խորհրդային Հայաստանի մասին:
Ստորագծեցէ՛ք բոլոր ածականները:
Ի՞նչ ցոյց կուտան գէշ, խուլ, ամեն, հին, կարմիր, նոր:

Գ Ա Ր Ն Ա Ն Ա Ռ Ա Ի Օ Տ

Բարի լուսի զանգեր զարկին,
Զընգզընգալէն անո՛ւշ, անո՛ւշ,
Լոյսը ծագեց մեր աշխարհին,
Շողչողալէն անուշ, անուշ:

Հովտում առուն խոխոջում է,
Գըլգըլալէն անո՛ւշ, անո՛ւշ,
Քամին բարակ շընկշընկում է
Զըլգըլալէն անո՛ւշ, անո՛ւշ:

Կռունկն եկաւ երամ կապած,
Կկըռկըռալէն անո՛ւշ, անո՛ւշ,
Կաքան քարին՝ տաղ է կարդում,
Կըվկըվալէն անո՛ւշ, անո՛ւշ:

Հարս ու աղջիկ հանդերն ելան
Շորորալէն անո՛ւշ, անո՛ւշ,
Ծաղկանց բուրմունքն անմահական
Սըլսըլալէն անո՛ւշ, անո՛ւշ:

Պատմէ՛ք բու բառերով այս ոտանատրի բովանդակութիւնը:
Տուր նշանակութիւնը հետեւեալ բառերում.— զանգ, հովիտ,
քամի, երամ, տաղ, հանդեր, բուրմունք, անմահական. այս
բառերէն որո՞նք գոյական եւ որո՞նք ածական են:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՄՈՒՏՔԸ ԵՐԵՒԱՆ

Ժամը եօթին երբ լոյսը նոր բացւած էր, Պարոյրը մեզի եկաւ:

Երբեք ես զայն այդքան այլայլած չէի տեսած:
Արդեօք բա՞ն է պատահեր: Թէեւ ան գունաթափ էր,
բայց տիրութեան նշոյլ չկար երեսին: Նայեցաւ
չորս կողմ, մօտեցաւ եւ կամաց ըսաւ.

— Աչքդ լոյս, մերինները շուտով պիտի գան:

— Այո՞, ուրկէ՞ իմացար — հարցուցի անոր:

— Գարաժը աշխատողներէն իմացա: Մարդու
բան չըսես, նոյնիսկ քրոջդ ալ: Լսող նայող չկա՞:

— Չէ՛, մի վախնար: Հանգիստ գործիդ նայէ՛:
Պարոյրը գնաց:

Չանցաւ եօթը օր, մերինները եկան:

Կարմիր դրօշակները կը ծածանէին Երեւանի
մէջ: Բանւորներն ու գիւղացիները ուրախութեամբ
կը գիմաւորէին Կարմիր Բանակը:

ՀԱՐՑԱՐԱՆ.— Ի՞նչ ուրախալի լուր բերաւ Պարոյրը:
Ինչո՞ւ կը վախնար Պարոյրը:

Ինչո՞ւ բանւորներն ու գիւղացիները ուրախու-
թեամբ դիմաւորեցին Կարմիր Բանակը:

Ձեր տեսրակին մէջ գրեցէ՛ք վերի հատւածի
մէջ եղած գոյականները եւ ածականները ա-
ռանձին սխմակներու մէջ:

Փ Ո Ք Ր Ի Կ Լ Ի Ա Ն

Լիան Ձինացի աղջիկ է: Ան 7 տարեկան էր երբ հայրը մեռաւ:

Մայրիկը չէր կրնար կերակրել Լիան: Անգլիացի տիկին Լուրենը 7 տուար տւաւ Լիայի մայրիկին, գնեց Լիան:

Լիան կուլա եւ չուզէր մօր փեշը թող տալ: Տիկին Լուրենը կը բարկանա, կը լռեցնէ զայն:



Կը տանջւի Լիան տիկնոջ տան մէջ: Կ'աշխատի առաւօտ կանուխէն սկըսեալ մինչեւ գիշերը ուշ տեն:

Ամեն մէկ սխալի համար կը ծեծեն Լիան:

Օր մը դրացիին ծառան ըսաւ, որ քաղաքին մէջ

կանանց միութիւն կա: Միութիւնը կը պաշտպանէ ճորտերը:

Լիան փախաւ տիկնոջ տունէն:

Եկաւ միութեան գրասենեակը:

Գանգատեցաւ, որ իրեն կը ծեծեն, ցոյց տւաւ թեւերու կապուտցած տեղերը:

— Այլեւս չեմ երթար, չեմ երթար այնտեղ:

Անցան մէկ քանի տարիներ:

Ես Լիան տեսա Մոսկվայի մէջ: Ան այնտեղ համալսարանի մէջ կ'ուսանի:

Երբ վերջացնէ, Լիան պիտի երթա Ձինաստան:


Կը պաշարի կանանց ճնշողներու դէմ:

ՏԵՂԵԿԱՆՔ.— Այն բառը որ գործողութիւն կամ վիճակ, այսինքն ընել, ըլլալ կամ կրել կը ցուցնէ բայ կ'ըսի:

Օրինակ.— Երգել, ուտել, գնել, կարդալ, բնանալ:

Յոյց տւէ՛ք վերի հատւածի մէջ գտնուող բոլոր բայերը:

ԲԱՆԻՈՐԸ ԵՒ ԳԻՒՂԱՑԻՆ



Բանուորը կ'ապրի քաղաքը եւ կ'աշխատի գործարանի մէջ: Այնտեղ նա կ'արտադրէ զանազան գործիքներ, մեքենաներ, եւ ապրանք՝ շաքար, թէյ, օճառ եւ ուրիշ շատ բաներ:

Գիւղացին կ'ապրի գիւղը եւ կը պարապի գիւղատնտեսութեամբ: Նա կ'արտադրէ զանազան մըթերքներ՝ ցորեն, գարի, կորեկ, բանջարեղէն եւ կաթնեղէն, եւ ուրիշ կենսամթերքներ:

Գիւղացին իր արտադրած մթերքները կուտա քաղաքին եւ անոր փոխարէն կը ստանա հազուստեղէն, շաքար, աղ, լուցկի, օճառ, զանազան գործիքներ եւ մեքենաներ, գիրք, լրագիր եւ ուրիշ ապրանքներ:

ՀԱՐՑԱՐԱՆ.— Ո՞ւր կ'ապրի եւ կը գործէ բանուորը: Բանուորը ի՞նչ կ'արտադրէ: Ի՞նչ կ'արտադրէ գիւղացին: Ստորագծեցէ՛ք վերի հատւածի բոլոր բայերը: Ի՞նչ ցոյց կուտա — կ'ապրի, կ'աշխատի, կ'արտադրէ, կը պարապի, կուտա, կը ստանա:

Աշտուր նոր սկսեր էր յաճախել դպրոց: Ան շատ հանդարտ, համեստ եւ ջանասէր երեխա էր: Աշտուի հայրը երկար ատենէ ի վեր անգործ էր: Աշտուը դրամ չունէր գիրք, տետրակ, մատիտ եւ գրիչ գնելու համար:

Աշտուը յաճախ կուլար երբ չէր կրնար իր դասերը պատրաստել, գիրք եւ թուղթ չունենալուն համար: Ան շատ կը նեղւէր, երբ իր ընկերներէն ետ կը մնար:

Ընկերները շատ կը սիրէին Աշտուը, բայց անոր ամենամօտիկ բարեկամն էր Ստեփանը:

Օր մը Ստեփանը իր ընկերներուն ըսաւ.

— Տղաք եկէք գիրք գնենք Աշտուի համար: Չէ՞ որ անոր հայրը անգործ է:

ՀԱՐՅԱՐԱՆ.— Ի՞նչու Աշտուի հայրը դրամ չունէր: Բու հայրդ կը գո՞րծէ: Համբեցէ՛ք թէ քանի՞ գոյական, ածական եւ բայ կա վերի հատւածի մէջ:

Փոքրիկ տղան մի վարդ տեսաւ,
Սիրուն մի վարդ մէջը դաշտին.
Վարդը տեսաւ, ուրախացաւ,
Մօտը վազեց սիրուն վարդին:

Սիրուն վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը մէջը դաշտին:

Տղան ըսաւ.— Քեզ կը պոկեմ,
Ա՛յ կարմիր վարդ մէջը դաշտին:
Վարդը ըսաւ.— Քեզ կը ծակեմ,
Որ չմոռնաս փշոտ վարդին:

Փշոտ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը մէջը դաշտին:

Ու անհամբեր տղան պոկեց,
Սիրուն վարդը մէջը դաշտին,
Փուշը անոր ձեռքը ծակեց,
Բայց ալ չօգնեց քնքուշ վարդին:

Քնքուշ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը մէջը դաշտին:

Պատմէ՛ք բու բառերովդ բովանդակութիւնը:
Լրացուցէ՛ք հետեւեալները.—

Տեսա	տեսար	տեսաւ
Երգեցի
Վագեցի
Կարդացի

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Ն

Փանոսի եղբայրը կը ծառայէր Կարմիր Բանակին մէջ: Ան կ'ուզէր նամակ գրել եղբորը, բայց գրել կարգալ չէր գիտեր:

Շարաթ մը վերջ ան գտաւ աշակերտ մը, որ նամակ գրէ իրեն համար: Փանոսը նամակը առաւ եւ գիւղէն քաղաք գնաց:

Նամակատունէն նամակադրոշմ գնեց, փակցուց պահարանին վրա եւ երկարեց վարիչին:

— Ընկեր ձգէ նամակատուփին մէջ — ըսաւ վարիչը: Բայց նկատելով որ վրան հասցէ չէր գրուած, ըսաւ:

- Հասցէն գրէ:
- Գրել չգիտեմ — ըսաւ Փանոսը:
- Ըսէ ես գրեմ:
- Երեւան...
- Յետո՞:
- Կարմիր բանակի մէջ կը ծառայէ, ըսաւ Փանոսը:
- Ո՞ր գունդին մէջ, ո՞ր վաշտին մէջ:
- Չեմ յիշեր, անոր նամակը քովս չէ:
- Առ, գնա գիւղ, հասցէն գրել տուր եւ յետո ուղարկէ:

Փանոսը շատ բարկացած էր: Որոշեց ինչ ալ որ ըլլա, գրել կարգալ սորվի:

ՀԱՐՑԱՐԱՆ.— Փանոսի եղբայրը ո՞ւր կը ծառայէր:
 Ի՞նչու Փանոսը նամակ չէր գրեր:
 Ի՞նչու Փանոսը որոշեց գրել կարգալ սովորիլ:
 Լրացուցէ՛ք հետեւեալները.—

Կ'ուտեմ	Կ'ուտես	Կ'ուտէ
Կ'երգեմ
Կը կարդամ
Կը հագնիմ

ԱՐԵՒԻ ԵՒ ԶՈՒՐԻ ՄԱՍԻՆ



ԻՆՉՊԷՍ ԼՈԳՆԱԼ

Ահա այսպէս պէտք է լողնալ, որ օգուտ ստացւի:

Լողցէք ամեն օր, բայց մէկ անգամէն ոչ աւելի:

Ամեն անգամ 10 րոպէէն աւելի չի լողնաք:

Երբ ջուրէն դուրս գաք, թաց մարմնով մի կանգնիք արեւի կամ քամիի դիմաց: Անմիջապէս սրբւեցէք եւ հազւեցէք:

Մի լողնաք երբ անօթի էք, կամ ուտելէ անմիջապէս վերջ:

Երբեք մինակ չլողնաք անծանօթ տեղեր:

Ամեն մէկ Հոկտեմբերիկ պէտք է լողալ սովորի: Լողալ սովորեցէք պիտներնեղէն:

ՀԱՐՑԱՐԱՆ.— Ի՞նչպէս պէտք է լողնալ:
 Թաց մարմնով քամիին դէմ ի՞նչու պէտք չէ կանգնիլ:
 Լրացուցէ՛ք հետեւեալները.—

Լողցա	Լողցար	Լողցաւ
Սրբւեցա
Լողացի
Սովորեցա

Ի՞նչ՞՞՞՞ ՊԵՏՔ Է ՊԱՌԿԻԼ ԱՐԵՒԻ ՏԱԿ



Արեւի տակ պառկելը շատ օգտա-
կար է: Բայց պէտք է գիտնալ թէ ինչ-
պէս ընելու է այդ:

Եթէ չի գիտնաք՝ կը վնասուիք:

Առաջին օրը պէտք է պառկել 5 րո-
պէյէն ոչ աւելի: Յետո օրական 2 րոպէ
կարելի է աւելցնել: Բայց ձեզ համար
կէս ժամէն աւելին վնասակար է:

Ամեն երկու րոպէն պէտք է դառ-
նալ, մէկ մը մէկ կողմը, մէկ մը միւ-
սը, մէկ մը մէջքի, մէկ մը փորի վրա,
որ կաշին չայրի:

Գլուխը եւ աչքերը պէտք է ծածկել
երեսսրբիչով կամ շապիկով:

Կարելի չէ պառկել արեւի տակ
ճաշէ առաջ եւ կամ անմիջապէս յետո:

Ով որ լաւ չզգար, անոր համար
լաւ չէ արեւի տակ պառկել:


ՀԱՐՑԱՐԱՆ.— Արեւի տակ ի՞նչպէս պէտք է պառկիլ:
Ի՞նչ կը պատահի եթէ երկար պառկիս:

Լրացուցէ՛ք հետեւեալները.—

Պառկեցա	պառկեցար	պառկեցաւ
Հագուեցա
Ծածկեցի
Լացի

Ի՞նչ՞՞՞ ՊԵՏՔ Է ՀԱԳՆԻԻԼ ԱՄԱՌԸ

Ամառը պէտք է հազնւիլ թեթեւ եւ ազատ:
Երեխաներ, ամառը նախքան լողնալը եւ արե-
ւի տակ պառկելը, գնացէք, թող բժիշկը ձեզ քննէ:



ՀԱՐՑԱՐԱՆ.— Ի՞նչ պէտք է ընել նախ քան լողնալը եւ արեւի
տակ պառկիլը:

Մ Ե Ղ Ո Ւ

Պղզան, պղզան, պղպղզան,
Պզտիկ մեղու տղազան,
Դաշտ ու հովիտ կը շրջիս,
Բարձր սարեր կը թռչիս
Ու ոտքերով թաւամաղ
Փոշի առած տուն կուգաս:

ՀԱՐՑԱՐԱՆ.— Բոլոր պղզացող բանները մեղր կը շինե՞ն:
Լրացուցէ՛ք.—

եմ	ես	է
եմք
էի
էինք

ՓՈՔՐԻԿ ԱՇԽԱՏԱԻՈՐՈՒՂԻՆ

Երկար եւ ցուրտ ձմեռ էր: Աղքատիկ տուներու մէջ փայտի եւ ածուխի պահեստները դատարկուած էին: Աղքատները բան մը չունէին վառելու: Ամեն օր անոնք կ'երթային փողոցները, փայտի կտորներ ժողվելու:

Փոքրիկ Եսթերենց տունն ալ փայտ չկար: Անոր մայրը հիւանդ էր եւ չէր կրնար տունէն դուրս ելլել: Եսթերը հայր չունէր: Բայց մօրը հիւանդութեան ժամանակ Եսթերը պարապ չէր նստած: Ամեն առաւօտ կանուխ դպրոց երթալէն առաջ, ան փողոցներէն փայտի կտորներ կը հաւաքէր եւ մօր համար կրակ կը շինէր: Շնորհիւ փոքրիկ Եսթերին, աղքատիկ տան մէջ հիւանդ մայրը միշտ տաքուկ էր:

ՀԱՐՑԱՐԱՆ.— Ի՞նչու աղքատիկ տուներու մէջ փայտ չկար:
 Ի՞նչու Եսթերի մայրը չէր աշխատեր:
 Դուն կը խնամե՞ս քու ծնողները, ի՞նչպէս:

Լրացուցէ՛ք.—

Եղա
Եղանք
Պիտի ըլլամ
Պիտի ըլլանք

ՕԳՆԵՆՔ ՄԱՆԿԱՄՍՈՒՐՆԵՐՈՒՆ

Դուք կ'ուզէ՞ք, որ փոքրիկները չի խանգարեն մայրիկը աշխատանքի ժամանակ:

Դուք կ'ուզէ՞ք, որ ձեր փոքրիկ եղբայրներն ու քոյրերը անխնամ չմնան:

Օգնեցէ՛ք մանկամտուներուն:

— Ի՞նչպէս օգնենք:

— Խաղալիքներ շինենք:

— Ես թելի պարապ կոճերէն խաղալիքներ կարող եմ շինել — ըսաւ Աշխէնը:

— Ես ալ լուցկիի տուփերէ:

— Ես տախտակի կտորներէ այնքան բաներ կարող եմ շինել...:

ՀԱՐՑԱՐԱՆ.— Ի՞նչ է մանկամտուրը:
 Մանկամտուր երբեք գացե՞ր ես:
 Դուն խաղալիկներ կրնա՞ս շինել: Ի՞նչ:

Լրացուցէ՛ք.—

Կ'ուզեմ
Կ'ուզեմք
Կ'ուզէի
Կ'ուզէինք

— Գետի սառույցը կտարւե՛ր է...

— Սառույցը կ'երթա — կը կանչեն երեխաները եւ կը վազեն դէպի գետը:

Մարդիկ հաւաքւած կամուրջին վրա, կը նային տակը:


Գորշ ջուրի երեսին վրա կը լողան սառույցի սպիտակ ու մեծ կտորներ:

Ուժեղ քամին կը փչէ:

Թրա՛խկ, թրա՛խկ, — կը կոտորին սառույցները, կը բաժանւին իրարմէ ու կը լողան առաջ:

Գետը կը շարժի, կը շարժի, կարծես կենդանի ըլլար ան:

Մարդ երբ նայի գլխու պտոյտ կ'ունենա:



ՀԱՐՑԱՐԱՆ.— Տես՞ծ ես գետի բացւիլը:
Տարւա ո՞ր եղանակին կը բացւի:
Խ. Հայաստանի մէջ ի՞նչ գետ կա:
Խոնարհեցէ՛ք ազալ բայը:

Ձիւնը արագ կը հալի: Մայթերու մօտէն առաւիյներ կը հօսին: Երեխաներ թղթէ նաւակներ կը ձգեն ջրի մէջ ու ծիծաղելով կը վազեն անոնց ետեւէն: Աշխատանքը կ'եռա: Ամեն տեղ երեխաներ կան. մէկը ցախաւելով կ'աշխատի, միւսը առուն կը մաքրէ, ջրի համար ճամբա կը բանան: Նոյն խկ կտուրն են բարձրացած: Բոլորին ալ աշխատանք կա, բոլորն ալ ուրախ են:

Ահա խումբ մըն ալ հոս. մէկ քանին կամուրջ կը շինեն, միւսները ջուր կը կապեն: Ան ալ Լեւիկի ջրաղացը, ջուրը կը դպչի թեւերուն ու կը դարձնէ: Ի՞նչ լաւ է, ուրա՛խ. դարուն է, դարուն:



ՀԱՐՑԱՐԱՆ.— Ձիւնը ե՞րբ կը հալի:
Երեխաները ի՞նչ կ'ընէին:
Կամուրջ Կամուրջներ
Կամուրջի Կամուրջներու
Կամուրջէ Կամուրջներէ
Կամուրջով Կամուրջներով
Խօսելու եւ գրելու ատեն բառերու առած այս
ձևերը հոլովոյթ կ'ըսին:



— Շողիկ, այդ Ի՞նչ կ'ընես:

— Մօրաքոյր ջան, դուքսը ցեխ է, գորգ կը գործեմ, որ դուան առաջ փռենք, ոտքերնիս սրբենք: Դպրոցին համար բաւական պատրաստած ենք, ամեն խմբակ ունի իրեն դրան առաջ: Մէկ մէկ հատ ալ նւիրած ենք գիւղխորհուրդին ու խրճիթ ընթերցարանին:

— Թէ որ այդպէս է, Շուշիկ ջան, թեւ կուտամ մէկ հատ ալ մեզի համար շինեցէք: Կ'ըսէ մօրաքոյրը:

— Շատ լաւ, մօրաքոյր, ծղնոտ մենք շատ ենք հաւաքած, եթէ թելը տաս կը պատրաստենք. համաձայնեցաւ Շողիկը:

ՀԱՐՅԱՐԱՆ. — Ի՞նչ կ'ընէր Շողիկը:

Դուն ալ կարո՞ղ ես գորգ գործել:

Կամուրջ բառի բոլոր հոլովները գործածեցէ՛ք առանձին նախադասութիւններու մէջ:



ՁՄԵՌ

Յուրա ու ձիւն եկաւ,
Գետ, առու լոեց,
Իր ճերմակ գորգը
Չմեռը փռեց:

ՓՈՐՁ. — Դասարան տարէ՛ք մէկ բաժակ լեցուն ձիւն: Հետեւեցէ՛ք. ինչքա՞ն եւ ի՞նչպիսի ջուր ստացա՛ք:

Հոլովները վեց տեսակ են. ուղղական, հայցական, սեռական, տրական, բացառական, գործիական:

Գետ բառի բոլոր հոլովները տւէ՛ք:

Շուտով կուգա

Կանաչ Գարուն,

Սար ու ձորեր

Կը ծաղկին:

Ետ կը դառնան

Նախշուն հաւքեր,

Գարնան գովքը

Կը կանչեն:

ԸՆԿԵՐ ԳԱԼՈՒՍՏԸ

Այսօր դպրոց եկաւ Ընկեր Գալուստը:

Նա ծեր բանուր է:

Մեզ շատ բան պատմեց:

Ըսաւ, որ գործարանն առաջ հարուստինն էր:

Հարուստը բանուրը շատ կը չարչարէր ու փող
քիչ կուտար:

Գիւղացիին հողը քիչ էր:

Հողը հարուստինն էր:

Հարուստները գիւղացին ալ կը չարչարէին:

Բանուրն ու գիւղացին պաշտպանող չկար:

Մեր ուսուցչուհին ալ շատ բաներ պատմեց:


Յոյց տաւ ահա այս նկարները:



Բանուրներ են:

Եկեր են Թագաւորին քով, որ իրենց պաշտ-
պանէ:

Թագաւորը պալատին մէջ կ'ապրի:



Միշան ու Սաշան ալ իրենց լաւ հագուստնե-
րը հագեր, եկեր են, առաջ կը վազեն, որ Թագաւո-
րը իրենք ալ տեսնէ:

Կը տեսնէ՞ք Միշային:

Սա ալ Սաշան է:

Փախած ատենը գնդակը դպեր է կրծքին:

Ահա անոր մայրը չոքեր է գետին:

Ձիերու վրա տոգէտ կողակները կը քշեն անոնց,
սուրերնին հանած. ու կը կոտորեն, կը զարնեն, կը
հեռացնեն:

Թագաւորը այսպէս կ'օգնէր բանուրին:

ՀԱՐՅԱՐԱՆ.— Ի՞նչ պատմեց ընկեր Գալուստը:

Ի՞նչ նկար ցոյց տաւ ուսուցչուհին:

Թագաւորը ո՞ր կը բնակի:

Թագաւորը ի՞նչ ընդունելութիւն տաւ բան-
ուրներուն:



Լ Ե Ն Ի Ն Ը

Հզոր պաշտպանն է նա բանւորներուն.
Նա էր որ բերաւ կարմիր Հոկտեմբեր,
Անտուն գիւղացուն՝ հա՛ց, ազատութիւն
Եւ եղբայրութիւն, ծիծաղ, երգ ու սէր:

Դժւար էր գործը մեր մեծ ուսուցչին.
Շատ զրկանք տեսաւ. շատ բանտ ու աքսոր,
Բաժին հանեցին անմահ Լենինին,
Բայց վերադարձաւ նա նորէն մի օր.

Եւ հաստատ կամքով
Եւ իր մեծ խելքով
Յաղթեց տէրերուն
Եւ բանւորական նոր կարգ հաստատեց —
Բանւոր-գիւղացու միացեալ ուժով:

ՀԱՐՅԱՐԱՆ.— Ո՞վ է Լենինը:
Նա ի՞նչ սովբեցուց մեզի:
Ի՞նչպէս նա յաղթեց:
Քանի՞ մտէր յայտնած են ընկեր Լանինի
մասին:

Ա Ռ Ո Ղ Ջ Ը Լ Լ Ա Ն Ք

Սոնան եւ Հայկը բակին մէջ խաղալ սկսան:

Սոնան վերցուց ձողիկը, իսկ Հայկը դբօշակ-
ները, եւ սկսան ազատ շարժումներ կատարել:

Մէկ, երկու,

Գլուխդ բարձրացուր:

Երեք, չորս, թեւերդ լայն բաց.

Հինգ, վեց, նստիր կամաց.

Եօթը, ութը, նետէ ձողդ,

Նստիր, հանգստացիր,

Կրկին սկսիր:

— Մէկ ալ, ըսաւ Սոնան:

— Չեմ կարող, յոգնած եմ, պատասխանեց

Հայկը:

— Երեւի անկանոն շունչ կը քաշես — վրա բերաւ

Սոնան:

— Իսկ ի՞նչպէս պէտք է շնչել:

— Երբ կը նստիս, արտաշնչէ, իսկ երբ կը
բարձրանաս, ներշնչէ, հասկցա՞ր:

— Հասկցա:

Կրկին սկսան եւ ամեն մէկ վարժութենէ վերջ
քիչ մը հանգստանալով, նոյն բանը երեք անգամ
կրկնեցին:


ՀԱՐՅԱՐԱՆ.— Ի՞նչու Հայկը շուտ յոգնեցաւ:

Գուն ալ մարգանք կ'ընե՞ս:

Մարգանքի համար լաւ ժամանակը ե՞րբ է:

Ի՞նչ տարբերութիւն կա ձողի եւ ձողիկի մի-
ջեւ:

Ուրիշ ի՞նչ բառեր գիտես իկ-ով վերջացող:





ԱՇՈՒՆԸ

— Ի՞նչ լաւ ժամանակ է աշունը — կ'ըսէր Սուրբիկը — Ի՞նչքան մրգեր կան, խաղող, դեղձ, տանձ, խնձոր, սերկեւիլ...

Միայն մրգեր չեն, հապա բանջարեղէնները, ստեպղին, կաղամբ, սոխ, բանջար, ճակնդեղ:

— Իսկ բամպակը, բամպակը, որմէ մեզ համար կտորներ կը պատրաստեն, աւելցուց Շուշիկը:

— Ի՞նչ ուրախ է բերքահաւաքը:

— Ես աշունը շատ կը սիրեմ որովհետեւ Հոկտեմբերեան Յեղափոխութեան տարեդարձն ալ այն ժամանակ կուգա, վրա բերաւ Մանուկը:


ՀԱՐՑԱՐԱՆ.— Ի՞նչու համար աշունը լաւ ժամանակ է: Ուրիշ ի՞նչ պտուղներ կը հասնին այդ ժամանակ:

Ամենամեծ տօնը ո՞ր եղանակին կը հանդիպի: Բամպակ բառի վեց հոլովներով նախագասուքիւններ շինեցէք:

Օրինակ.— Բամպակը ներմակ է: Մեմբ բամպակ հաւաքեցինք: Այս բամպակին թելերը կարն են: Իմ շապիկս բամպակէ շինած է: Բամպակով լեցուցինք պարկը:

Ս Ա Ր Ե Ա Կ

Արեւը սփռեց
 Լոյսը դաշտերուն,
 Զրուրը գնաց
 Զուր տա արտերուն,
 Զուր տա պարտէզին,
 Կանանչ մարգերուն:
 Ու ելան անթիւ
 Ճճի ու միջատ
 Ծածկեցին թփեր,
 Ու կոկոն ու վարդ:
 Տեսան սարեակներ
 Թռան որ հասան
 Կանաչ մարգերուն,
 Արտի օգնութեան:
 Ու շարան-շարան
 Սեւ սեւ սարեակներ
 Կը կտցեն, կ'ուտեն
 Անթիւ միջատներ:



ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿ

Ճամբի տակին
 Ճմբան ծերին,
 Զալ ծախ ճուտի
 Ճիտը ծուռ:

Խոնարհեցէք սփռել բայը:

Լ Ա Ի Ն Ե Տ Ե Ի Ի Ր

Մութը կը կոխէր: Փողոցին մէջ մարդ չկար:
Արամն ու Լեւոնը պիտներական ժողովէն տուն կը
վերադառնային: Անոնք հաւաքական տնտեսութեան
նոր շինած գոմի մօտէն կ'անցնէին: Այնտեղ է կա-
յարանէն բերած նոր, փայլուն տրակտորը:

Յանկարծ անկիւնի ետեւէն լսեցաւ խշշոց ու
փսփոսոց:

Երեխաները կանգ առին, ականջ դրին: Լեւոնը
ճանչցաւ կուլակ Մաթոսի ձայնը:

Մթութեան մէջ չըթաց լուցկին...:

Նոյն վայրկեանին երեխաները հասկեցան կու-
լակի միտքը: Հասկեցան, որ հաւաքական տնտեսու-
թեան անդամները կը մնան առանց գոմի, առանց
մեքենայի:

Շունչերնին կտրած վազեցին դէպի զանգակ-
ները:

Խփեցին ահազանգը: Մարդիկ դուրս վազեցին:
— Գոմը կ'այրեն...:

Առաւօտ է:

Գոմի դռան առաջ կը փայլի մեծ նոր տրակ-
տորը:

Աշակերտները չըջապատած կը նային մետաղէ
ձիուն:

Գոմի մօտ, կուլակ Մաթոսը ոստիկանները
քաղաք կը տանին:

ՀԱՐՑԱՐԱՆ.— Ուշադրութիւն քրէֆ շեշտի եւ ստորակէտի
գործածութեանը:

Կարդացի նամակդ, մայրի՛կ:

Մայրի՛կ, նամակդ կարդացի:

Նամակդ, մայրի՛կ, կարդացի:

Խօսքը որո՞ւ է ուղղւած: Ի՞նչ նշան դրւած է
այդ բառին վրա: Այդ բառը միւս բառերէն
ի՞նչով բաժնւած է:

Մ Ա Յ Ի Ս Ը

Ճամբա տւէք, սար ու դաշտեր,
Ճամբա բացէք այն հիւրին,
Նա կը բերէ ձագեր, թիթեռ,
Նախշուն օրեր մեր երկրին:

Հազար գոյնի վառ գորգ տալու
Ո՞վ է կուգա դէպի մեզ,
Նուշիկ-մուշիկ, վառ ու նազլու,
Սիրուն դէմքով, ժպտերես:

Ու դուրս կ'երթան անոր առաջ
Գառնուկ, թռչնիկ, մարդ, ծաղիկ,
Հազար գոյնի լաթեր հագած
Երգ ու տաղով գեղեցիկ:

Ճամբա տւէք, ծառեր ու խոտ,
Մեր անուշիկ այս հիւրին,
Մայիսն է նա ցօղոտ շաղոտ,
Ամիսներու թագուհին:

ՀԱՐՑԱՐԱՆ.— Քու բառերով պատմէ բովանդակութիւնը:
Ըսէ ամիսներու անունները:

Ամենէն շատ ո՞ր ամիսը կը սիրես: Ի՞նչու:

Հետեւեալ բառերով նոր նախադասութիւններ
կազմեցէ՛ք.— Մայիս, նամբա, օր, քեթեւ,
գառնուկ, ծաղիկ, ծառ, խոտ:

Մ Ե Ր Ծ Ա Ղ Կ Ա Ն Ո Ց Ը

Ծաղկանոցին մէջ կ'աշխատինք:

Նախ տետրակներուն մէջ կը նկարենք ծաղկանոցի ձեւը՝ երեք թմբերով, — մէկը չըջանաձեւ, միւսը քառակուսի, երրորդը աստղաձեւ:

Սերմերը բարձր խմբի աշակերտներէն ենք ստացած:

Աչնան կը վերադարձնենք կրկնակի չափով:



ՀԱՐՅԱՐԱՆ.— Դուք ալ ծաղկանոց ունի՞ք:
Սերմերը որո՞նցմէ, առեր էին:
Վերի հատուածի մէջ եղած ածականներով նոր
նախադասութիւն կազմեցէ՛ք:

Ա Ն Տ Ա Ռ Ի Բ Ա Ր Ե Կ Ա Մ

Երեխաներ, ձեզմէ ո՞վ «Անտառի բարեկամ» է,
թող գա տոմս ստանա:

— Ի՞նչ «Անտառի բարեկամ», ի՞նչ տոմս...:

— Ով չի գիտեր, թող լսէ: Անտառը շատ սուղ է մեզ համար: Անտառի օդը մաքուր է ու զով: Իսկ ձմեռը՝ եթէ փորձես առանց վառելիքի մնալ, սենեակի մէջ կը սառիս:

Ըլլա տան մէջ, կամ դպրոցի՝ չուրջը նայիլ տես, ամեն ինչ փայտէ շինուած է:

Մեր երկրի մէջ կը կառուցւին զանազան շէնքեր, երկաթագծեր, նաւեր, ամեն տեղ փայտ պէտք է:

Անտառի բարեկամներ, պահպանենք անտառը, ոչնչացնենք անտառի վնասատուները:

Ով, որ ծառէն ճիւղեր փրցնէ, եւ

կամ թռչունը բոյնին մէջ նեղէ,

Նա անտառի բարեկամը

Ձի համարւիր, չի համարւիր:

Գ Ա Ր Ո Ւ Ն Ը Ա Ն Տ Ա Ռ Ի Ն Մ Է Ջ

(Մեր Օրագրէն)

Այսօր մենք անտառ գնացինք, յիշեցինք մեր աչնան եւ ձմրան պտոյտները:

Ծառերը ծաղկեր են: Թռչունները վերադարձեր:

Մենք արմատներով մանուշակներ հանեցինք, տուփերու մէջ տնկեցինք, բերինք դպրոց:

Կը ջրենք ամեն օր, որ չի չորնան:

Եւ գեղեցիկ են եւ լաւ հոտ ունին:

ՀԱՐՅԱՐԱՆ.— Ի՞նչ պէտք է քնէ անտառի բարեկամ մը:

ԿՈՎՆ ՈՒ ԱՐՏՈՅՏԸ

Ծաղիկ կովը բակին մէջ խոտ կ'ուտէր:

Արտոյտ մը թռաւ, նստաւ անոր մէջքին եւ սկսաւ կտցել:

— Խեղճ Ծաղիկ, արտոյտը կ'երեւի կը ցաւցնէ մէջքը:

Իայց Ծաղիկը շատ հանգիստ է, նա կը շարունակէ ուտել համեղ խոտը:

Իսկ արտոյտը կը կտցէ, հա կը կտցէ:


— Ինչո՞ւ նա այդպէս կ'ընէ:

Ահա թէ ինչու. հիմա դարուն է, կովերու հին մազը կը թափուի, տեղը նորը դուրս կուգա: Անոնց կաշին կը քերտի, կը քսին պատերուն:


Իսկ արտոյտը բոյն կը շինէ, որ հաւկիթներ ածէ որ ձագեր հանէ:

Նա կովին մազը հանելով կը տանի ու կը փռէ բունին մէջ, հաւկիթին եւ ձագերուն տաք տեղ կը պատրաստէ:

Կովն ալ կ'աղատուի անպէտք մազերէն:



Որոշեցէ՛ք վերի հատւածի գոյականներու շնչաւորներն ու անչունչները:



ԿԸ ՄԱՔՐԵՆՔ ԱՅԳԻՆ

Աճապարենք,

Այգին մաքրենք,

Եւ հաւաքենք թափւած

Տերեւ ու չոր ճիւղեր,

Որ մեր այգին ըլլա մաքուր:

Աղբը վառենք, մոխիր հաւաքենք:

— Լաւ նայեցէ՛ք, ի՞նչ կ'ընեն անոնք: Դուք ի՞նչ էք ըրեր:

ՀԱՐՑԱՐԱՆ.— Ե՞րբ կը մաքրեն այգին:

Կազմեցէ՛ք նոր նախադասութիւններ վերելի հատւածի մէջ գտնւած բայերով:


Մ Ո Շ Ա Կ

Հայրը մոծակ, մայրը մոծակ,
 Ինքն ալ մոծակ, մոծակի ձագ.
 Մոծակի ցեղ, կնճիթն ասեղ,
 Երկու թեթեւ, թափանցիկ թեւ,
 Երեք զոյգ ոտ բարակ ծղնոտ,
 Ծնաւ ճահճում իր մօր մահճում:


— Ի՞նչպէս կ'ոչնչացնեն մոծակները. հարցուցէ՛ք ուսուցչին:

Հ Ա Ն Ե Լ ՈՒ Կ

Ան ի՞նչ մոմ է,
 Աղիւսէն է,
 Մինչեւ երկինք է
 հասեր.
 Կերն ածուխ է,
 Շունչը ծուխ է,
 Շատ կ'ուղենք մենք
 Այդ մոմէն:
 Ի՞նչ է:—



ՀԱՐՑԱՐԱՆ.— Վերի երկու ստանաւորներուն մէջ քանի՞ նախադասութիւններ կան:
 Տուր հետեւեալ բառերու հոմանիչներ:
 Մոծակ, բարակ, մահիմ:



Ը Ն Տ Ա Ն Ի Կ Ե Ն Դ Ա Ն Ի Ն Ե Ր ՈՒ Տ Ի Ա Ս Ծ Օ Գ ՈՒ Տ Ը

Եզը դաշտին մէջ հողը կը վարէ,
 Զին ալ մեր բեռը կը քաշէ:
 Կովը շատ կաթ ու միս կուտա,
 Իսկ խոզիկը՝ ճարպ ու մազ:
 Ոչխարն իր բուրդը մեզ կուտա,
 Կատուն մկները կը բռնէ,
 Եւ մեր բոլոր ունեցածին
 Քաջ գամբոն կը հսկէ:

ՀԱՐՑԱՐԱՆ.— Ի՞նչ ընտանի կենդանիներ գիտես:
 Նկարագրէ անոնց տարբերութիւնները:
 Ո՞րն է քու սիրած կենդանին, ի՞նչու:
 Խոնարհէ՛ վարել բայը:
 Վերի հատումին մէջ գործածուած բայերը ի՞նչ ժամանակ ցոյց կուտան:
 Տեղեկանք.— օրինակ, կերա ցոյց կուտա անցեալին եղած գործողութիւնը, իսկ կ'ուտեմ՝ ներկա:

ՈՉՆՁԱՑՆԵՆՔ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ

ԿԱՂԱՄԲԻ ԹԻԹԵՌ

Երեխաները բանջարանոցին մէջ բոներ էին փոքրիկ, սպիտակ թիթեռ մը:

— Այդ թիթեռը վնասակար է, ըսաւ Արամը — եթէ անոնք շատնան, մեր կաղամբը կը կորսի:


— Մի՞թէ այդքան ազատ է այս թիթեռը, — հարցուց Աննիկը:



— Ազատ թիթեռը չէ, այլ անոր թրթուրը, — պատասխանեց Արամը:

Այս թիթեռը կ'ածէ փոքրիկ հաւկիթներ:

Հաւկիթներէն դուրս կուզան որդեր, որոնք կը կոչին թրթուռներ:



Թրթուռը շատ ազատ է, շարունակ կ'ուտէ ու կը մեծնա:

Կը մեծնա՝ հարսնեակ կը դառնա:

Հարսնեակը ոչ կ'ուտէ, ոչ կը խմէ, կը մնա անշարժ:

Յետո՛ւ հարսնեակի մէջէն դուրս կը թռչի ճիշդ ասոր նման թիթեռ մը, որը նորէն հաւկիթ կ'ածէ ու ինքը կը թմրի որեւէ տերեւի վրա:

Հիմա գիտէք թէ ի՞նչ է վնասը թրթուռին:

Գիտնալը քիչ է, պէտք է աշխատիլ:

Կազմեցէք խումբեր: Հաւաքեցէք թրթուռները ամաններու մէջ, վրան լեցուցէք եռացած ջուր, եւ անոնցմով կերակրեցէք հաւերը:

ՀԱՐՅԱՐԱՆ. — Ի՞նչու վնասակար է քիթեռնիկը:

Ստորագծեցէ՛ք բոլոր բայերը՝ տալով անոնց ժամանակը:

ՀԱԻԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՑԱՆՔԱԸ


Յանելու վերջին օրերն են:

Գիշեր, ցորեկ կը լսին տրակտորներու աղկաղկոցը:

Երկաթէ եղները ոչ կը քնանան, ոչ կը հանգըստանան, իսկ տրակտորիստները կարգաւ կ'աշխատին: Անոնք դաշտի մէջ կ'ապրին, անիւներու վրա պզտիկ տուներ ունին անունը «վակոնիկ»:

Կ'աճապարեն տրակտորիստները, շուտով ամբողջ դաշտը կը ցանեն, կը վերջացնեն:

— Ի՞նչպէս կը ցանեն առանձին եղողները:



ՀԱՐՅԱՐԱՆ. — Ի՞նչ է հաւաքական տնտեսութիւնը: Խոնարհեցէ՛ք ցանկ բայը: Ստորագծեցէ՛ք բայերը՝ եւ տւէ՛ք անոնց ժամանակը:

ՆՈՐ ՀՈՐՈՎԵԼ

Երէկն անցաւ. երէկն մե՛ր չէր,
Հո՛ղը որ կար – հողտիրոջն էր. –
Հա՛ցը մեր չէր – փողտիրոջն էր.
Միտքը, հողին – տէրտրոջն էր:

Հո՛, հորովե՛լ, յոգնած եզներ,
Հո՛, հորովե՛լ, տանջւած եզներ:

Մէրը մեր չէր – մեծատանն էր,
Ճրագ որդին – գերութեան էր,
Կեանքը մեր չէր – տէրութեան էր,
Միս, է՛ն կեանք չէր, գերեզմա՛ն էր:

Կը դատէինք դառ ու դաժան՝
Սովը դռնէն միշտ անբաժան:


էսօր որ կա – էսօ՛ր մերն է,
Համա՛յնքն է որ հողին տէրն է,
Մենք կը դատենք – արտը մէկ է,
Մեր վարն ու ցան – դատը մէկ է:

Երթա՛ք անդարձ, մռայլ օրե՛ր,
Տրակտո՛րն է հանդերն ինկեր:

Հո՛ւնձքն է առատ – հասկերու ծով –
Մեր համայնքի պիրկ հարւածով,
Չեռքը դալա՛ր, ջահել բանւոր –
Մենք հաց կուտանք, դո՛ւք՝ տրակտոր:

Հարւածային, կարմի՛ր ընկե՛ր,
Մենք ենք էսօր աշխարհի տէր:

Պատմէ քու բառերովդ:



Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԵԱԸ

Այս վերը զրւածը Խ. Հայաստանի քարտէսն է:

Խ. Հայաստանը փոքր երկիր մըն է: Անոր մեծ մասը կը զրււեն լեռները: Հայաստան դաշտերով եւ անտառներով հարուստ չէ: Արագածը ամենարճը լեռն է Խ. Հայաստանի մէջ: Երկիրը լեռնոտ ըլլալուն պատճառաւ գետերը արագահոս են, նաւարկութեան համար յարմար չեն, բայց ելեկտրական ուժի մեծ աղբիւրներ են: Ամեն տարի նորանոր ելեկտրակայաններ կը կառուցւին եւ մեր երկիրը կ'ունենա առատ ելեկտրական լոյս՝ տուներու եւ քաղաքներու համար եւ ելեկտրական ուժ՝ գործարաններու եւ մեքենաներու համար:

Խ. Հայաստանի մայրաքաղաքը Երեւանն է, իսկ երկրորդ մեծագոյն քաղաքը՝ Լենինական:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

1. Կազմեցէ՛ք փոքրիկ նախադասութիւններ, իւրաքանչիւր գոյականի իւր դնելով յարմար բայը:

Ձի, ձուկ, աղանի, օձ, եգ:

Կը վազէ, կը թռչի, կը ֆայէ, կը լողա, կը սողա:

Աչքով, մատներով, ակոյալով, ոտով, ականջներով:

Կը լսենք, կը տեսնենք, կը ֆալենք, կը ծամենք, կը շօշափենք:

Ուսուցիչը, հողագործը, գրագետը, դարբինը, դերձակը, կօշկակարը, հիւսնը, աշակերտը, խոհարարը:

Զգեստ կը կարէ, գրքեր կը գրէ, դաս կուտա, կօշիկ կը կարէ, կահ կարասիներ կը շինէ, արտերը կը մշակէ, կերակուր կը պատրաստէ, երկաթ կը ծեծէ, կը սովորի:

2. Կազմեցէ՛ք նախադասութիւններ իւրաքանչիւր գոյականի իւր դնելով յարմար բառերը:

Կովը, ձիւն, շունը, ոչխարը, խոզը, հաւը, կատուն, մեղուն:

Մեղը եւ մով կուտա, կաթ ու միս կուտա, հոտը կը պահպանէ, հաւկիթ կ'ածէ, միս եւ բուրդ կուտա, ճարպ եւ մագ կուտա, մուկերը կը բռնէ, բեռ կը կրէ:

Երկաթէն, ցորենէն, բուրդէն, փայտէն, կաւէն, կտաւէն, ալիւրէն, ապակիէն:

Տուներ եւ կարասիներ կը շինեն, գանազան գործիքներ կը շինեն, կերպաս կը պատրաստեն, ճերմակեղէն կը կարեն, ալիւր կը պատրաստեն, ամաններ կը շինեն, խմոր կը պատրաստեն, շիշեր կը շինեն:

Կազմեցէ՛ք նախադասութիւններ:

Ձիւն, աղանիւն, մեղուն, երկաթը, ցորենը, կաղնին, գնդակը, գաւաթը:

Խաղալիկ է, աման է, ընտանի կենդանի է, թռչուն է, միջատ է, մետաղ է, հացահատիկ է, ծառ է:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր. — Գրաւոր պատասխանեցէ՛ք:

Ի՞նչ գոյն ունին — շաքարը, մուրը, խոտը, պարզ երկինքը, յարդը, թուղթը, ածուխը, աղը, ոսկին, արիւնը, ձիւնը:

Լրացուցէ՛ք հետեւեալ նախադասութիւնները:

Աղը սպիտակ է, իսկ մուրը.....: Փիղը մեծ է, իսկ մուկը.....: Մազը բարակ է, իսկ պարանը.....: Յորեկը լոյս է, իսկ գիշերը.....: Քարը ծանր է, իսկ փետուրը.....: Թռռնիկը դեռատի է, իսկ պապը.....: Զմուռն գիշերը երկար է, իսկ ցորենը.....: Քարետախտակը ֆունակիւն է, իսկ գնդակը.....: Շոգին տաք է, իսկ սառնոցը.....: Շունը ստուար է, իսկ հաւը.....: Երկաթը մետաղ է, իսկ կեռասնիւն.....:

Լրացուցէ՛ք հետեւեալ նախադասութիւնները:

Ես մէկ բերան ունիմ, իսկ..... ձեռք: Մէկ ձեռքիս վրա ունիմ հինգ մատներ, իսկ երկու ձեռքերուս վրա.....: Շաքարը եօթը օր է, իսկ ամիսը.....: Տարին ունի..... ամիս:

Մենք կ'ապրինք.....: Կ'ուսանինք.....: Ես թուղթ ու մատիտ կը գնեմ.....: Մենք կը լոգանանք.....: Ես ընկերներու հետ կը խաղամ.....: Ես կը բնակիմ.....:

Գրքոցին մէջ, աշխարհի վրա, խանութէն, գետին մէջ, փողոցը, մեր տան մէջ:

Կազմեցէ՛ք նախադասութիւններ իւրաքանչիւր անունի իւր դնելով յարմար բառերը:

Գութանով, մանգաղով, սղոցով, կացինով, մուրճով, գրիչով, ասեղով, դգալով, դանակով, մկրատով:

Կերակուր կ'ուտեն, փայտ կը կտրեն, հաց կը կտրեն, ֆար կը կտրեն, հագուստ կը կտրեն, գիր կը գրեն, արտը կը վարեն, հացահատիկներ կը հնձեն, ծառ կը կտրեն:

Լրացուցէ՛ք հետեւեալ նախադասութիւնները:

Յորեկէն կը պատրաստեն ալիւր, իսկ ալիւրէն.....: Բուրդէն կը պատրաստեն կերպաս, իսկ կերպասէն.....: Բամպակէն կը պատրաստեն կտաւ, իսկ կտաւէն.....: Կաւէն կը շինեն կառէ ամաններ, իսկ ապակիէն.....: Երկաթէն կը շինեն գանազան գործիքներ, իսկ փայտէն.....

Դասաւորեցէ՛ք հետեւեալ գոյականները :

Գնդակը, տիկնիկը, հովը, սահնակը.....

Գաւաթը, բաժակը, պնակը, կաթսան.....

Օրինակ.— Գնդակը խաղալիկ է, իսկ կաթսան տոման:


Ձին, կովը, արջը, սկիւռը, ոչխարը, աղաւնին, ծիծեռնակը, ննդուկը, սագը, նանը, մեղուն, բիբեռնիկը, հաւը, կատուն:

Թռչուններ են, միջատներ են, ստնաւորներ են:


Կազմեցէ՛ք նախադասութիւններ:

Ձուկերը, վարունգները, ցորենը, կաղնին, խնձորենին, կաղամբը, գայլերը, ստեպղիւնը, յեցգետինը, արջը, նապաստակը, բալենին, սալորենին, նակնդեղը, սոխը, բողկը, աղւէսը:

Կ'ապրին անտառներուն մէջ, անտառներուն մէջ կ'անին, բանջարանոցներուն մէջ կը բուսնին, դաշտերուն մէջ կը բուսնին, պարտէզներուն մէջ կ'անին, ջուրին մէջ կ'ապրին:



Մարգիկներու հումք Մը



8185

504

207

471
3091

2/2